ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

16.01.2012

հեռ.091193808
ՀՀ Լոռու մարզպետ՝
պարոն Ա. Նալբանդյանին

N 4

Հարգելի պարոն մարզպետ՝
Ձեզ ենք ներկայացնում Լոռի բերդ համայնքի 2011թ-ի ավագանու թիվ 21,22,23,24 որոշումները:

Գյուղապետ՝ Ա. Մելիքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 21 **ՈՐՈՇՈՒՄ**
18.11.2011թ

Ղեկավարվելով ««Տեղական ինքնակառավարման մասին»» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով ««Տեղական տուրքերի և վճարների մասին»» ՀՀ օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և ««Իրավական ակտերի մասին»» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

1. Սահմանել ՀՀ Լոռու մարզի, Լոռի Բերդ գյուղական համայնքում 2012թ-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել արդարադատության նախարարության պետական իրավական փորձաքննությունը անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Անուն ազգանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Լեռնիկ Մելիքյան			
Գագիկ Ասուլյան			
Սերյոժա Մկրտումյան			
Սերժիկ Պապիկյան			

Գյուղապետ՝ Ա.Մելիքյան
Քարտուղար՝ Ա.Մելիքյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լոռի Բերդ գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի դեկտեմբերի 18-ի, 21 որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ գյուղական համայնքի տարածքում 2012 թվականի համար Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) հիմնական օբյեկտների համար ՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10000 դրամ:

2) սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 20000 դրամ:

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40000 դրամ:

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ:

3)Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1)ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝1000 դրամ:

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ,յուրաքանչյուր եռամսյակի համար՝2000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 22 **ՈՐՈՇՈՒՄ**
02.12.2011թ

ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
Ղեկավարվելով «« Տեղական Ինքնակառավարման մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետով, «« Իրավական ակտերի մասին »» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լոռի Բերդ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը,աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N 23 որոշումը:

Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2012թ-ի հունվարի 1-ից:

Անուն ազգանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Լեռնիկ Մելիքյան			
Գագիկ Ասուլյան			
Սերյոժա Մկրտումյան			
Սերժիկ Պապիկյան			

Գյուղապետ՝ Ա.Մելիքյան
Քարտուղար՝ Ա.Մելիքյան

Հավելված
Լոռի Բերդ գյուղական համայնքի ավագանու
2021 թվականի 18.11.2021 որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ)
Համայնքի ղեկավար	1	90000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	55000
Աշխատակազմի քարտուղար	1	55000
Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	54000

Համայնքի ղեկավար՝ Ա. Մելիքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 23 ՈՐՈՇՈՒՄ
02.12.2011թ

Համայնքի 2012թ-ի բյուջեն հաստատելու մասին:
Հաստատել համայնքի 2012 թ-ի բյուջեն տարեկան՝
Եկամուտներով – 6.563000 դրամ
Ծախսերով – 8.191811 դրամ
Վարչական բյուջե - 6.563000 դրամ
Ֆոնդային բյուջե - 1.628811 դրամ:

Անուն ազգանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Լեռնիկ Մելիքյան			
Գագիկ Ասուլյան			
Սերյոժա Մկրտումյան			
Սերժիկ Պապիկյան			

Գյուղապետ՝ Ա.Մելիքյան
Քարտուղար՝ Ա.Մելիքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

N 24 ՈՐՈՇՈՒՄ
02.12.2011թ

Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հիմնադրամին 2011 թ-ի բյուջեից գումար հատկացնելու մասին:
Համայնքի 2011 թ-ի սեփական եկամուտներից 12000 դրամ կամավոր սկզբունքներով փոխանցել Լոռու մարզի արտակարգ իրավիճակների հիմնադրամին:

Անուն ազգանուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Լեռնիկ Մելիքյան			
Գագիկ Ասուլյան			
Սերյոժա Մկրտումյան			
Սերժիկ Պապիկյան			

Գյուղապետ՝ Ա.Մելիքյան
Քարտուղար՝ Ա.Մելիքյան